

ՍՊԻՇԳ

ՀՅՈՒՅՈՒՅԱՐԴԻՔ

1882-1887

1-4

47713

47714

47715

29549

Ա. Արմավորաց
Դ. Տօրու

Կ. Բայանչյ Ն 43

Ձե կը բարեւ եւ
աշխատի

1887-1888

Եթէ



Եթէ

Եթէ

Եթէ

Եթէ
на рус-

29549

29549

577

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ

Առաջարկելով ձեզ «Երախալրիք»-ի առաջին գիրքը,
իմ կողմից ոչինչ չունիմ ասելու. թող գիրքը վկայ լինի,
թէ որքան ջանք է գործ դրուած իր վրայ. Մի քանի տարի-
ներ աշխատելով զանազան հանդէսների մէջ, այժմ վստա-
հանում եմ իմ հատուածները առանձին գրքուկներով լոյս
ընծայել: Գուցէ այդ քայլն ևս չանէի, եթէ իմ բարեկամ-
ները չը խրախուսէին, չը լորդորէին ինձ: Քաղցր է ինձ հա-
մար այստեղ լիշտատակել, որ իմ բարեկամները ամեն կերպ
աշխատեցին «Երախալրիք»-ի տպագրութեան համար:

«Երախալրիք»-ը չորս գրքուկներից է բաղկանում
և պէտք է լոյս տեսնի տարուայ չորս եղանակներին.
I գիրքը՝ գարնանը թէեւ ուշ է լոյս տեսնում, սակայն
միւսները իրանց ժամանակին լոյս կը տեսնեն. II-ը՝ ամ-
րանը շուտով սրան կը հետեւի և միւսները ըստ կար-
գին—III-ը աշնանը և IV-ը ձմրանը:

«Երախալրիք»-ը մանուկներին է պատկանում. թէ
որքան աշխատել եմ նրանց հասկանալի լինելու, այդ
նրանք իրանց գէմքի գծերով կ'արտայալտեն, թէեւ տո-
ղերիս գրողն էլ ոչ պակաս առիթ է ունեցել նրանց
սրտի, զգացմունքների հետ խօսալու: Իսկ մեր մեծա-
պատիւ մանկավարժները թող մի փոքր ներողամտու-
թեամբ վերաբերուեն գէպի իմ աշխատութիւնը. նա
իմ երախալրիքը—առաջի պտուղն է և, գուցէ, կարող է
փշուր-փշուր լինել. նրա մատղաշ կազմը...

ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԱՐՃԱԼՈՅՍ



րշալոյսը հէնց որ լնկաւ
Բարձր լեռան գագաթին՝
Ամբողջ գիւղը խկոյն շարժուեց—
Աթափեցրեց ամենին :

Մէկը վազեց, բաղը ջրեց,
Մի ուրիշը շտապով՝
Գնաց արտին ակն տուեց
Ու տուն դարձաւ խնդալով:

Տաւարածը տաւարն տարաւ
Սիրուն կանաչ արօտներ,
Հովիւրն էլ շուտով հօտը
Քշեց ծաղկոտ բլուրներ:

Վեր թռաւ տեղից հարսը
Կուժը ուսեց, չուր բերեց:
Երբ որ տունը սրբեց պրծաւ՝
Իլիկն առաւ ու մանեց:

Ճախարակը բռբռացրեց XX
Տնքտնքալով մեծ տատը.
«Ես էլ վեր կենամ, բան կ'չինեմ,
Աչքերը ճմուեց մեծ պապը:

Իսկ ով որ իրայ վախտին
Վեր չը կացաւ ու քնեց,
Նրա ձին թոկը կտրեց, փախաւ,
Տիրոջը «զօ՛ ուով» արթնացրեց...

ՀԵՂԻՆԵ ԵՒ ՆԱՐԳԻԶ

Ա.

Որեքշաբթի էր. Համբարձման նախընթաց օրը: Գիւղական մանուկների մէջ մի անսովոր շարժումն էր նկատվում: Նրանք մէկ այս, մէկ այն ընկերոջ տան մօտն էին խռնվում, սենեակներ տնտղում, ուրախ-ուրախ ծափ տալիս, խորհրդակցում: Նրանք յարմարաւոր սենեակի էին ման գալիս, որ միւս օրը այնտեղ հաւաքուեն «ջան-գիւլումի» — «վիճակի» տան, իրանց ձեռով կերակուրները պատրաստեն: Բայց ո՞վ կը տար նրանց բրինձ, իւղ, ձու, որ իրանց «ջան-գիւլումը» սարքէին: Նրանք դրա մասին չէին էլ մտածում, բաւական էր, որ մի փունջ ծաղիկ տանէին մէկի տուն և տան տէրը պատրաստ էր իր ունեցածից մասն հանել նրանց: Ով կով ունէր՝ կաթն էր տալիս, ով բրինձ՝ բրինձ, իսկ ձուն սովորական էր, ոչ ոք չէր խնայում: Կային այնպիսի հարուստներ, որ փող էին տալիս: Մանուկներն այդ փողով փլաւի համար իւղ էին առնում:

Ուրախ, զուարթ էին մանուկները. իրանց «վիճակի» սենեակը սրբոտում էին, մաքրում, ջուր բերում շաղ տալիս. ոչ մէկը չէր ուզում ծուլանալ: Թէև շատ վաղ էր և մանուկ արեւը

նոր էր իր թուչկան ճառագայթները արձակել, բայց գիւղական մանուկները բոլորն էլ վեր էին կացել: Այս «վիճակի» տօնը նրանց սրտի նման պարզ է, անարատ. նրանք ծաղիկներ պիտի քաղէին, ծաղիկներ պիտի բաժանէին «խաչմերուկ» փնջած: Օ՛, ծաղիկներ քաղելն ու սար ու ձորով չափչփելը պար գալուց շատ հեշտ է:~~Ա~~ Ահա մանուկները կուի սկսեցին, լեզուի կուի. մէկ մէկու սկսեցին «տնագ անել» թէ՝ դու վախկոտ ես, չես կարող հեռու լեռներից լաւ ծաղիկներ բերել, միւսը թէ՝ մենակ ճանապարհու կը կորցնես, անտառում կը մնաս, գայլերը գլուխդ կ'ուտեն և այլ այսպիսի սրախօսութիւններ, որոնք վերջանում էին «փառ-փառ» ծիծաղով: Տղայ ու աղջիկ իրար հետ էին և իբրև փոքրիկներ ի միասին պէտք է «վիճակի» տային:

Մանուկները թողեցին իրանց կուները և պատրաստուեցին ծաղիկներ քաղելու գնալ: Ուրախ-ուրախ վագեցին ամենքը մի կողմով: Մէկը դաշտը վազեց, միւսը լեառը, երրորդը ձորը, միւսներն էլ իրանց ուզեցած տեղերը: Նրանք իրար մօտ պարծենում էին թէ՝ ես ամենից լաւ ծաղիկները պիտի ճարեմ, բոլորը նարգիկ ու յասմիկ պիտի բերեմ, միւսը թէ՝ ես շուշան ու մեխակ, մանիշակ պիտի բերեմ — չը նայելով որ այդ ժամանակ կապտաշեայ

մանիշակը գարնան գալուստը իմացնելով, հրաժեշտ էր տուել աշխարհքին:

Ակրուն Հեղինէն էլ այդպիսի մի անմեղ նախանձից դրդուած թռչկոտալով սար ու ձոր վազեց: Մէկ այս տեղից էր ծաղիկ քաղում, մէկ այն «Ճմակից» և իրան իրան խօսալով աւելի հեռուն գնում:

Արևը ամակի տակն էր մտնում, կրկին դուրս գալիս, ամպը բռնում էր նրան՝ երեսը ծածկում, բայց նա չէր համբերում և կրկին դուրս էր պրծնում: Օրը հով էր և մեղմ քամի էր փշում: Հեղինէի խոպոպիկ մազերը երեսը ծածկել էին, քամին ո՞ր չէր փշո՞ւմ, փռփռում էին նրա մազերը, կարմիր այտերը բացում, կրկին ծածկում, կրկին բացում: Նա անհոգ ծաղիկներ էր քաղում, հետը խօսում, ծաղիկներ էր քաղում, պաշում ու երգում: Սոխակն էլ մօտի ծառից սարերի և ձորերի, դաշտերի ու ծմակների համար սաղմոս էր կարդում, Արարծին փառաբանում: Հեղինէն լսում էր նրան և ինքն իրան ասում: «Բիւրիւլն է խօսում... ի՞նչ լաւ է ծլվլում: Հայրիկն ասում է, որ բիւրիւլը ամենից լաւ է երգում: Բայց նրան չեն բռնում, նա վանդակում չի կենում, սիրու ճաքում է. նա փարդ է սիրում և առանց նրա նստում, սուգ է անում...»

Բ.

Արևը մօտեցել էր իր մուտքին, արդէն ձորակներում մութը քիչքիչ տիրապետում էր: Հեղինէն ցնծալով նստեց և ծաղիկները մէկ մէկ կողովից հանում էր, աւելորդ մասերը կտրատում, տեսակները իրար հետ դնում: Նա ամեն տեսակից էլ քաղել էր. նա հաւատացած էր, որ իր ծաղիկներն ամենից լաւը կը լինին, ամենն էլ կը գովեն իրան:

— Այս յասմիկ է, այս շուշան, այս նունուֆար, այս մեխակ, այս յափրուկ, այս այն... այս այն... այնքան ծաղիկների տեսակներ կային, որ նա շփոթուեց, շատի անունը իսկի չէր էլ իմանում: — Իսկ նարգի՞զ, նարգի՞զ... վա՛ա՛ չը կայ, չեմ քաղել, ասաց նա և վեր թռաւ տեղից:

Հեղինէն ծաղիկները հաւաքեց կողովի մէջ և վճռեց մինչեւ նարգիզ չը գտնի, տուն չը դառնայ: Նա ուրախ, զուարթ վազեց նարգիզ գտնելու: Շատ քիչ տարածութիւն էր անցել և ահա մի քարոտ բլրի վրայ անթիւ նարգիզի թփեր նկատեց. միայն գժուար էր բլուրը բարձրանալ: Հեղինէն թեթև քայլերով դէպի նարգիզները վազեց: ~~Ն~~ Նա մինչեւ անգամ չէր էլ մտածում գժուարութեան վրայ. բայց բլուրը բարձրանալիս զգաց որ յոգնում

Ե: Նրա ոտները «սղղում» էին, քիչ ցած էր գալիս, կրկին բարձրանում էր, ցածանում, բարձրանում: Նա յօդնեց և մնաց բլուրի կը ըրդքին. երեսը վառվում էր, շունչը կտրվում, բայց հենց նայում էր նարգիզներին, «խելքահան» էր լինում... Հեղինէն մի քիչ հանգստացաւ թէ չէ իր բոլոր ոյժը հաւաքեց և վերջապէս հասաւ ծաղիկներին. նա թուլացած ընկաւ նրանց վրայ: «Ջաան-ջաան, այս էլ նարգիզ», ասաց նա չնչակտուր, և ծաղիկների վառ հոտը առատութեամբ նրա քիթը, բերանն էր մտնում: Հեղինէն այդպէս թուլացած իր յաջողութեան վրայ ծիծաղում էր...

Նա նարգիզներից մի քանի վինջեր կազմեց և սկսեց իջնել բլուրից: Այժմ նա հեշտութեամբ իջաւ: Նա նոր նկատեց, որ օրը «միջնաժոռել» է, սկսեց շտապել: Ճանապարհին շուտ-շուտ նայում էր ծաղիկներին և հազար մի անմեղ մտած մունքներով ոգևորվում: Նա շատ էր հեռացել գիւղից. իր ծանօթ սարերը թողել էր և մօտեցել անտառին: Նա նայեց իր ծանօթ ճանապարհ գտնելու. բոլոր ճանապարհներն էլ անծանօթ էին, խեղճը շուարած մնաց: Եւ նա շարունակում էր ճանապարհը մեքենայաբար: Այժմ յոգնածութիւնը աւելի զգալի դարձաւ. ահագին տարածու-

տառից լսվում էին գայլերի, աղուէմների գանչեր, եթէ նրանք մօտենային՝ իր և Հեղինէի դրութիւնը դժուար կը լինէր: Գուցէ ինքը պաշտպանէր, բայց վախենում էր, որ Հեղինէն արթնանար և երկիւղից ուշաթափուէր... Ահա այդ մտքերն էին, որոնց համար նա ծմրում էր... Բարեբախտաբար ամբողջ գիշերը Հեղինէն չը զարթնեց. նա շատ, շատ էր յոգնել:

Վերջապէս լոյսը բացուեց. արևելքը ծիրանի վոյնով փողփողում էր. արևը իր գալուստն էր խմացնում: Ամեն արարած իր առաւտեան երգն էր հնչում, քիչ-քիչ ուրախութիւնն ընդհանուր էր դառնում: Բայց ամենից աւելի ուրախ էր Հասկուլը. նրա երկիւղը փարատուել էր և ոչինչ բանի չէր կասկածում: Հեղինէն էլ զարթեցաւ: Նա տեսնելով իրան այդպէս օտար տեղ՝ լացն եկաւ, բայց աչքը ընկնելով ծաղիկների վրայ՝ ուրախացաւ. քիչ-քիչ մտաբերում էր իր գլխով անցածը. ահա և Հասկուլը, որ ուրախուրախ շուրջը թոշկոտում էր: Հասկուլը սկսեց վագվագել և Հեղինէն նորից ծաղիկներ քաղելով հետևում էր նրան. նա աւելի ուրախ էր: Նրանք գիւղին մօտեցան. Հասկուլը մի քանի ոստիւնով տուն հասաւ՝ նրա ետեւից Հեղինէն...

ԾԱՇԽԱԿԱՐԾ

Մայրը ուրախական արտասուքն աչքերին
առաջ վաղեց. նրա սիրտը խօսեց, լեզուն
լուեց...

— Օ՛չ, տես մի՞է, մայրիկ, ո՛րքան «ջան-
գիւլիւմի» ծաղիկ եմ քաղել, բոլորը նա՛ր-
գիզ է, նա՛րգիզ, ասումէր Հեղինէն ծաղիկ-
ները ցոյց տալով:

Այդ օրը Հեղինէն ամենից ուրախ էր.
«ջան-գիւլիւմին» նրա բախտը այս դուրս
եկաւ.

«Ծառի տանձը ի՞նչ ա,
Անթիւ գանձը ի՞նչ ա.
Աղջիկը որ նարգիզ սիրի՝
Ինքն էլ նարգիզ ա, բա ի՞նչ ա»...

1887

Ա Զ Ե Ր



Վրեր են տեսնում սիրուն դաշտերը,
Գոյն գոյն ծաղկունքով զարդարած, զուգած.
— Իմ միշտ շարժուող, պայծառ աչերը:

Ո՞վրեր են տեսնում սարն ու ձորերը,
Խոտով կանաչած, վազկան ջրով լի.
— Իմ հրաշալի, ցոլուն աչերը:

Ո՞վրեր են տեսնում լուսին, աստղերը,
Վճիտ երկնքում պայծառ փայլելիս.
— Իմ համարձակ, ուրախ աչերը:

Ո՞վրեր են տեսնում ծառն ու բոյսերը,
Ամեն բարիքով բեռնաւորած, լցած.
— Իմ թանկագին, փոքրիկ աչերը:

Ո՞վրեր են տեսնում խեղճի չորերը,
Եւ կամ հարստի շքեղ հանդերձը.
— Իմ վշտալի ջուխտակ աչերը:

Ո՞վրեր են տեսնում նեղութիւնները,
Աշխարհիս ամեն անդթութիւնները.
— Իմ արցունքով լի տիսուր աչերը:

Ո՞վքեր են տեսնում յատակն ու կեղտերը,
Կամ զանազանում վատն ու լաւերը.
—Իմ հետաքրքիր, դիտող աչերը:

Բայց ո՞վքեր ինձ տուին այս աչերը,
Որ տեսնում է ամեն լաւն ու վատերը.
—Իմ հարազատ, սուրբ ծնողները:

Ո՛չ, գնամ տեսնեմ իմ ծնողները,
Ծունր իջնելով մօտենամ նրանց՝
Եւ կուշտ համբուրեմ նրանց ձեռները:

1886



ԵՐԵԳՆԻՑ—ԱՂՋԻԿ

ՀԻՆ ԶՐՈՅՑ

Ա.



Ին ժամանակներում ապրում էր մի թագաւոր. սա ունէր մի խելօք որդի: Ուրիշ թագաւորներից շատ հարսնախօսներ էին գալիս այդ թագաւորի մօտ իրանց աղջիկը նրա որդուն տալու համար, բայց որդին միշտ չէր համաձայնվում ասելով. «Ես այնպիսի աղջիկ պիտի ուզեմ, որ ո՛չ մօրից լինի ծնուած և ո՛չ հօրից եղած»: Այդպիսով շատ թագաւորի աղջիկնեշ, որ նրա վրայ աչք ունէին, այդ պատասխանը ստանալով յետ էին կանգնում իրանց մտադրութիւնից:

Որովհետև թագաւորի որդին ամուրի էր մնում և նրա ուզած աղջիկը չէր ճարվում, թագաւորն իր մօտ կանչեց շատ իմաստունների, որ եթէ աշխարհիս երեսին գտնվում է այդպիսի աղջիկ, յալտնեն՝ որ ուզի իր որդու համար: Իմաստունները շատ մտախոհութեան մէջ ընկնելուց յետոյ յալտնեցին թէ մի ծովի մէջ՝ ափից մօտիկ մի եղէգն կալ. եթէ նրանից մի թիզ այնպէս կըտրուի, որ կտրողի ոչ մի տեղը չը թրջուի, նրան տուն բերելով մի քանի օրից յետոյ այն եղէգնը մի շատ սիրուն, ոսկէ շորեր հագած աղջիկ կը դառնալ: Թագաւորի որդին հէնց որ այդ խօսքերը լսում է, ճանապարհ է ընկնում և երկար ճանապարհորդութիւնից յետոյ հասնում է այն ծովին: Նա մօտենում է ասած եղէգնին և առանց մի տեղը թրջելու մի թիզ երկարութեամբ եղէգն է կտրում նրանից: Նա խնամքով եղէգ-

Նի կտորը գնում է ծոցում և վերադառնում է տուն։ Մի քանի օրից յետ, ինչպէս ասել էին իմաստունները, այն եղէքնի կտորը դառնում է մի աննման աղջիկ, ոսկէ և գեղեցիկ շորեր հադած։ Հենց որ թագաւորի տղան և նա իրար տեսնում են, բռնում են իրար ձեռից ու համբուրգում։

— Վերջապէս գտնուեցաւ այն երիտասարդը, որ ինձ կարողացաւ ձեռք բերել. քանի քանի տարի բիւրաւոր թագաւորի որդիներ կամեցել են ինձ ձեռք ձգել, բայց չեին կարողանում, որովհետեւ առանց թրջուելու եղէքնին չեին հասնում ու խեղդվում էին, — լեզու է առնում աղջիկը ժպտալով, և նայում է թագաւորի որդու երեսին, որ մնացել էր հիացած։

Թագաւորը լսելով այդ զարմանալի եղելութիւնը սաստիկ ուրախանում է։ Խեղճը շատ էր ծերացել իր որդու ցանկացած հարսնացուին երկար սպասելով։ Եօթն օր եօթն գիշեր հարսանիք արին։ Ողջ աշխարհը հաւաքուել էր տեսութիւն եղէքնից ծնուած աղջկան։ Ամենքն էլ զարմացել էին նրա գերբնական գեղեցկութեան և ոսկեպատ հանդերձի վրայ։ Թագաւորը հրամայել էր իր ժողովրդի ամեն մէկ մարդին արժանապէս պատուեն։ Մի խօսքով այդ հարսանիքին լիութիւն էր նրա տէրութեան մէջ. ամեն մէկը թագաւորի հետ հրճվում և ուրախանում էր։

Բ.

Հարսանիքից յետոյ անցել էր մի տարի. ծեր թագաւորը վախճանուել էր և նրանից յետոյ թագաւորում էր որդին։ Նոր թագաւորը և թագուհին քաղցր կեանք էին անցկացնում։ Նրանք սովորաբար զբօսնում էին ծովի ափին և դիտում էին ծովի մակերեսովթը, որի վրայ

նաւակների մէջ խռնվում էին բիւրաւոր մարդիկ։

Մի անգամ էլ երբ երիտասարդ թագաւորը ուրիշ տեղ էր գնացել, թագուհին միայնակ դուրս եկաւ ծովի ափը և այնտեղ շրջագայում էր։ Քիչ զբօսնելուց յետոյ նա կանգնեց ջրի մօտ և իր հրաշագեղ գեղեցկութիւնը ջրի մէջ տեսնելով՝ ինքն իրան վրայ հիանում էր։ Հենց այդ միջոցին թագուհուն մօտեցաւ մի արաբացուհի և սկսեց նրա հետ խօսակցել։ Թագուհին այնքան բարի էր, որ սիրով պատասխանում էր նրա հարցմունքներին։

— Ո՞րքան գեղեցիկ էք դուք, թագուհի, ձեր նմանը ողջ աշխարհում չը կայ, ասաց արաբացուհին։

— Ինչո՞ւ համար ես այդ խօսքերը ասում, հարցրեց միամիտ թագուհին աչքը ծովի ջրեց չը հեռացնելով։

— Այնպէս եմ ասում... Ես տեսնում եմ, որ դուք էլ էք զմայլուած ձեր գեղեցիկ պատկերի վրայ... բայց եթէ, թագուհի, ձեր ոսկեշող շորերն ես էլ հազնեմ՝ ձեզ պէս կը գեղեցկանամ։

Թագուհին ծիծաղեց։

— Ինչո՞ւ էք ծիծաղում, աղնիւ թագուհի, կուզէք փորձեցէք. տուէք ձեր շորերը հազնեմ, եթէ ձեզ նման գեղեցիկ չը լինիմ՝ ինձ ծովը ձգեցէք, նկատեց խորամանկ արաբացուհին։

Միամիտ թագուհին նրա խօսքը չը կոտրեց. հանեց իր շորերը և տուեց։ Արաբացուհին հագաւ և թագուհուն ասաց։

— Նազելի թագուհի, նայեցէք ջրին, տեսէք ձեզ պէս գեղեցիկ չը դարձայ։

Հենց թագուհին ջրին նայեց, արաբացուհին արագութեամբ ծովը գլորեց ու խեղեց, իսկ ինքը իբրև թագուհի սկսեց նազելամեմ զբօսնել։ Նա թագուհութիւնը խլեց և ուզում էր վայելել։

Այդ ժամանակ թագաւորը վերադարձել էր սլավա-
տը և թագուհուն այնտեղ չգտնելով, դուրս էր եկել ծովի
ափը: Երբ նա տեսաւ թագուհու շորերով արաբացուհուն,
մնաց զարմացած. բայց արաբացուհին շուտով ասաց.

—Ես այստեղ զբոսնելու ժամանակ յանկարծ սեւա-
ցայ, թագաւոր. Ես ձեր կինն եմ, մի հեռանաք, մօտեցէք:

Թագաւորը չէր իմանում ինչ անի. նա վեր էր քա-
շուել, բայց ուշքի գալով սկսեց մտածել, որ այդ բա-
նը կարելի է որ ուղիղ լինի: Նա իր կնոջն իր աչքի
լրացի պէս սիրում էր, և արաբացուհուց լսելով որ կի-
նը ինքն է, մօտեցաւ նրան և սկսեց խօսակցել: Նա
կասկածելու տեղիք չունէր: Արաբացուհուն տարաւ պա-
լատը. բոլոր պալատականները մնացել էին զարմացած
նրա ալլակերպութեան վրայ, բայց տեսնելով որ նա շարժ-
վում է իբրև թագուհի՝ նրանց կասկածը փարատուեց:
Նրանք էլ հաւատացին և իբրև թագուհու՝ արաբացու-
հուն պատուասիրում էին: Թագաւորն առանձին եղած
ժամանակ ընկղմում էր մտածմունքների մէջ և տիրում
էր...: Նա կարծես կասկածում էր իր կնոջ ալլակերպու-
թեան վրայ, բայց երբ գալիս էր թագուհու մօտ՝ նրա
սիրտը չը կոտրելու համար նրա սլյափոխուելու պատ-
ճառով՝ ուրախանում էր, ծիծաղում էր և վարվում էր
առաջուալ նման, իսկ խորամանկ արաբացուհին ինքն
իրան մէջ հրճվում էր, որ վերջապէս կարողացաւ այդ-
պէս մեծ փառքի տիրանալ...

Պ.

Ծովն ընկած թագուհին դառնում է մի շատ սի-
րուն ձուկն և իբրև ձկների թագուհի խաղում է նրա
փրփրալից կոհակների հետ: Նրա խալտերը ոսկեզօծ են
լինում և ինքն այնքան իմաստուն, որ միւս ձկները սկսում

են նրան սիրել և իրանց թագուհին անուանել:

Մի օր յանկարծ նա ձկնորսի ուռկանն է ընկնում
և ձկնորսը հիացած նրա գեղեցկութեան վրայ՝ ափսոսում
է սպանել:

—Թագաւորին ընծալ կը տանեմ, միայն թագաւո-
րին է վայել այս ձուկը, ասում է ձկնորսը և միւս օրը
նրան կենդանի թագաւորի պալատն է տանում: Թագա-
ւորը զարմանում է այդ ձկանը տեսնելով. նա իր կեան-
քումը ալլեքան գեղեցիկ ձուկ չէր տեսել: Նա վերցնում
է ձկանը ձեռքը և կարմիր խալտերից համբուրում: Հրա-
մայում է ծառաներին ձկանը աւազանում կենդանի պա-
հել, իսկ ձկնորսին առատ վարձատրել: Այնուհետև թա-
գաւորի միակ զբաղմունքը դարձաւ այդ ձուկը. շարու-
նակ նստում էր աւագանի մօտ և ձկան չքնաղ խաղալուն
նախում: Ամենաազիզ կերակուրներով էր պահում նրան:

Արաբացուհին գլխի ընկաւ. նա իմաստուն էր: Նա
հասկացաւ որ այն ձուկը թագուհու ոգին է պարունա-
կում իր մէջ, ուստի և սուտ հիւանդացաւ ու զառան-
չում էր ամբողջ օրը: Թագաւորը շատ բժիշկների հրա-
ւիրեց որ առողջացնեն նրան, բայց նա չ'առողջացաւ:
Վերջապէս մի օր թագաւորը հարցրեց.

—Ի՞նչ կուզես որ քեզ համար ճարեմ:

Արաբացուհին այդ խօսքերից օգտուելով ասաց.

—Եթէ այն ձուկը մորթէք՝ նրա մսից ուտելով
կ'առողջանամ...

Թագաւորը շատ էր սիրում իր կնոջը և նրա խօս-
քը չը կոտրեց: Երբ ձկանը մորթում էին, նա արաբա-
ցուհուց ծածուկ իր սենեակում լալիս էր: Թագուհին
հրամայել էր, որ ձկանը մորթելիս մի կաթիլ արիւն
գետնին չը թափեն և երբ նրան եփեն, նրա մարմնից
մի կտոր անդամ դէն չը ձգեն, այլ բոլորը հաւաքեն և

այլեն: Նրա հրամանը կատարուեցաւ և նա ձկան մսից
ուտելով առողջացաւ:

Թագաւորը մելամաղձոտ էր դարձել և այնուհետեւ
նա կարծում էր թէ իրանից մի բան պակասել է և
իրան ուրախացնող ոչինչ չը կալ:

Մի երկու շաբաթից յետոյ պալատի առաջ մի սի-
րուն չինարի դուրս եկաւ: Թագաւորը տեսնելով այդ
սիրուն չինարիին հրամայեց լաւ խնամք տանել: Նուրջը
պատել տուեց պարապով և շուտ-շուտ ջրել էր տալիս:
Չինարիին մեծանում էր. քանի մեծանում էր, այնքան
գեղեցկանում էր. մի տարում այնքան բարձրացաւ, որ
կատարը կարծես երկնքից կպած լինէր:

Չինարիի համբաւը տարածուել էր հեռու և շատ
տեղերից գալիս էին նրան տեսնելու: Չինարիին բուսել
էր ձկան մի փշից, որ ճառաներն անզգուշութեամբ վայր
էին ձգել: Թագուհին հասկացաւ ամենը. նա կրկին
սուտ հիւանդացաւ յայտնելով թէ ատամները սաստիկ
ցաւում են: Թագաւորը հարցրեց պատճառը և թէ Բնչ
ճարի, որ տտամների ցաւը վերջանալ: Թագուհին յայտ-
նեց, որ եթէ չինարին կտրեն, նրա արմատից ծամելով
կ'առողջանալ: Թագաւորը այդ էլ հրամայեց կատարել,
թէև արտասուքը ծլծլում էր նրա աչքերից չինարին
կտրելու ժամանակ: Թագուհին այս անդամ ես պատուի-
րել էր, որ չինարին այնպէս կտրեն, որ մի տաշեղի
կտոր անդամ գետնին չը մնալ, բոլորը հաւաքեն և
այրեն: Նրա հրամանը թէև կատարուեցաւ, բայց մի
տաշեղի կտոր անսպասելի կերպով թռաւ ընկաւ երթի-
կով մի պառաւի տուն:

Թագուհին չինարիի արմատից ծտմելով առողջա-
ցաւ և այնուհետեւ ինքն իրան մէջ ուրախանում էր,
որ վերջապէս ամեն կասկածներից ազատուեցաւ:

Պ.

Այն տաշեղի կտորը, որ ընկել էր պառաւի տունը՝
աղջիկ դարձաւ, և երբ պառաւը ուրիշ տեղ էր գնում
կամ ջուրը, նա տունը սրբում էր, ամեն բան կարգա-
ւորում, մաքրում և կրկին տաշեղ դառնում ընկնում
տան անկիւնը: Պառաւը երբ գալիս էր այս ամենը տես-
նում, մնում էր քարացած: Նա դէս էր ընկնում, դէն էր
ընկնում, հարեւաններին հարց ու փորձ անում, բայց
ոչինչ չէր կարողանում իմանալ, և հարեւաններն էլ
ասում էին, որ այդ իրանց բանը չի: Պառաւը այդ
հրաշքը մոռացութեան տուեց, բայց երկրորդ անգամ
էլ կրկնուեց. այդ անգամին կերպուր էլ էր եփում կրակի
վրայ: Պառաւի զարմանքին չափ ու սահման չը կար:

—Թագնուեմ տան անկիւնում, մի տեսնեմ ով է
այն բարի ոգին, որ իմ տունն այսպէս կարգաւորում է,
ասաց պառաւը ինքն իրեն և թագնուեց:

Նա յանկարծ տեսաւ որ տաշեղը աղջիկ դարձաւ,
ինչպէս տունը կարգաւորում էր՝ այնպէս արեց և հէնց
ուզում էր անկիւնը գնալ՝ պառաւը կռնիցը բռնեց: Աղջիկը չ'ընդդիմացաւ և կանգնեց: Պառաւը շատ հարց
ու փորձ արեց, նա ոչինչ չը պատասխանեց: Երբ վեր-
ջապէս ասաց դու իմ աղջիկը դարձիր՝ մենակ եմ, աղ-
ջիկը համաձայնուեց:

Այնուհետեւ աղջիկը պառաւի տանից չը հեռացաւ,
և նրա տնային գործերը կատարում էր: Պառաւը շատ
սիրեց նրան և իրան գլխից նրան լաւ էր ուզում:

Այդ ժամանակներում թագաւորի ձիաները լղարել
էին. Թագաւորի հրամանով ձիաները տներում տալիս
էին որ պահեն, կերպուր, որ տեսնէ նրանց մօտ էլ
այդպէս լղարում, մաշվում են: Մի ձի էլ պառաւին

էին տուել պահելու։ Այս ձիկ վրայ սկսեց մեծ խնամք տանել աղջիկը. լաւ թիմարում էր իրան ձեռով, կերակրում էր, իսկ ինքը տանից չէր գուրս գալիս։ Չին այնպէս գեղեցկացաւ և գերացաւ, որ տեսնողի խելքը կը գնար։ Խաղում էր, նազելի գլուխը քաշ էր գցում ու ցատկում, խրխնջում ու ոտներով գետինը դոփում։

Թագաւորը հրամայեց բաժանած ձիաները հաւաքել. ոչ մէկի ձին ալնպէս լաւ չէր պահած, ինչպէս պառաւինը։ Թագաւորն իր ձիու վերայ խնամք տանողի անունը կամեցաւ իմանալ և պառաւին իր մօտ կանչեց։ Պառաւը յայտնեց որ ձին պահողը իր աղջիկն է։ Թագաւորը խիստ զարմացաւ լսելով այդ բանը և ցանկացաւ աեսնել նրա աղջկանը։

Պառաւը յայտնեց աղջկանը թագաւորի ցանկութիւնը. աղջիկը համաձայնուեց՝ եթէ միայն թագաւորը խնջուք կը սարքէ և իր կնոջն ու թագաւորական պաշտօնեաներին հետը կը բերէ, ինքն էլ կը յայտնուի։ Թագաւորը չը զարմացաւ. նա համեստ մարդ էր։ «Այստեղ բան կայ», ասում էր նա։ Խնջուքը պատրաստուեցաւ և կարգ կարգ եկան բազմեցին թագաւորն ու թագուհին և շատ պալատականներ։ ճաշկերովթը շարունակվում էր, բայց դեռ աղջիկը չէր երեսում։ Այդ ժամանակ պառաւը յայտնեց, որ աղջիկը իր աղջիկը չի և մանրամասն պատմեց նրա գլխի անցքը։ Բոլորն էլ զարմացան և անհամբեր սպասում էին նրա յայտնուելուն։ Թագուհին «մատը կծեց» և պատճառ բերելով իր գլխացաւութիւնը սեղանից հեռացաւ։ Վերջապէս յայտնուեցաւ աղջիկը. ամենքն էլ ոտի կանգնեցին և մնացին սառած. նրանց առաջ իրանց նախկին թագուհին էր կանգնած հասարակ շորերով, բայց նրա գեղեցկութեան «շղանգից» պատերը պսպղում էին։ Թագուհին այդ ժա-

մանակ պատմեց բոլոր մանրամասնութիւնը։ Ամենքն էլ լաց եղան և ուրախութիւնից շփոթուել էին... Թագաւորը համբուրեց թագուհու ձեռը, իսկ թագուհին էլ ոչինչ չէր կարողանում խօսել, միայն մարդարտի նման արտասուքը գլոր-գլոր էին գալիս նրա այտերով։ Թագուհուն և պառաւին տարան պալատը։ Նուտով այդ համբաւը տարածուեցաւ ժողովրդի մէջ. վրէժինդրութիւնից ամենն էլ ուզում էին պատառ-պատառ անել խաբեբային։

Միւս օրը մի կալ մեխերով գամեցին և արաբացուհու մաղերը ձիկ ագից կապելով՝ բաց թողին. նրա մարմինը կտոր-կտոր, միս-մսահան եղաւ։

Խաբեբան իր նենգ հոգին աւանդեց,
Անմեղը կորած փառքը ձեռք բերեց...

1886

ԲԱՐԵՍԻՐՏ ՄԱՆՈՒԿ



Նտիրական մնացիր,
Խեղճ թռչնիկի սիրուն բոյն,
Քո տէրերըն էլ չը կան,
Չարը բռնեց խեղճերուն:

Անգութ բազէն վերևեց
Իր սրատես աչքերով՝
Դիտեց նրանց և իսկոյն
Խեղդեց իր սուր ճանկերով:

Տարաւ հետը շատ հեռու
Անլագ փորը կշատցընեց,
Իսկ քեզ, խեղճ բոյն, հինգ ձուով
Անտիրական նա թողեց...

Այժմ ես շտապով
Տանեմ մի տեղ ապահով,
Որ անգութը չը տեսնի,
Իր սեւ ցանցը չը լարի:

Իսկ դու ճնճուկ, այ սիրուն,
Եկ, տաքացրու այս որբ բոյն,
Որ ձուերից ճուտեր դուրս գան,
Քաղցը ձայնով ճվճվան:

Ես միշտ գաշտից մժեղներ
Եւ անտառից պտուղներ՝
Ամենայն օր կը բերեմ,
Որբիկներիս կը պահեմ:

Երբ որ նրանք մեծանան,
Օդում թռչել իմանան,
Նրանց գաշտում բաց կը թողամ,
Ազատութիւն նրանց կը տամ...

Սակայն նրանք ողջ տարին՝
Խմբով կանգնած մեր ծառին
Անուշիկ ձայնով միշտ կ'երգեն,
Բարերարին կը գովեն...

1883

ԸՆԿՈՒԶԵՆԻ

Ա.

Աարնանուին արեւը նոր էր զարդարել նորատունկ բոյսերն ու ծառերը, երբ մի ընկոյզ զգալով այդ մեղրալից եղանակի գալուստը և յստակ օդի թարմութիւնը՝ սկսեց ցողուն արձակել անբերրի հողի տակից: Փոքրիկ ընկուզենուն թէւ հողմը ձգել էր չոր քարափի ճեղքուածը, ուր կիտուած էր շատ սակաւ հող, բայց նա ուրախ էր, որ անողորմ որդնիկը չը կարողացաւ իր միջուկը՝ հոդին դողանալ և ոչնչացնել աշխարհի երեսից:

Ս.յս յաջողութիւնից ընկուզենին միանդամայն ոգեռուած դալար և մազանման արմատները զգուշութեամբ խրելով հողի մէջ, սկսեց մտիսուալ կենդանաշունչ օդը հանդարտ ծծել: Չը նայելով հողի անբերրիւթեանը՝ ընկուզենին արդէն մի ամսից յետոյ կարծրացած բռն և կանաչագեղ տերեներ ունէր:

Զափահաս կամսարը, որ իր փոքր քոյր Մարիամի հետ մի պարտէզ էր մշակել և զանազան ընդեղէններ սերմել՝ մի օր տեսաւ ընկուզենու դալար կատարը, որ հովասուն հողմից ծածանվում էր:

— Ո՛հ, օ՛հ, բացագանչեց նա և բարձրացաւ ժայռի վրայ. քոլրիկ, մի տես է այս սիրուն ընկուզենուն:

— Ուր է, ուր, չեմ տեսնում:

— Բարձրացիր քարի վրայ, կը տեսնես:

Եւ յիրաւի Մարիամը քարի վրայ բարձրանալով, տեսաւ փոքրիկ ընկուզենուն և եղբօր նման բացագանչեց. «Ինչ սիրուն է...»

— Բայց ի՞նչպէս է աճել այդ չոր քարափի կրծքին,

միթէ ալդտեղ ևս գտնվում է ջուր, հարցրեց Մարիամը: — Այդքանը չը գիտեմ. բայց սրան պէտք է տանենք մեր պարտէզը, ասկա թէ ոչ այս քարափի վրայ անշուշտ կը չորանալ ամառուալ սաստիկ տապին:

— Ի հարկէ, ի հարկէ, ոչ պակաս ուրախութեամբ համաձայնուեց թխաչեալ Մարիամը:

Մանուկները միանդամայն գրաւուած ընկուզենու գեղեցիկ տեսքից՝ սկսեցին անմիջապէս փորել նրա տակը: Բայց որչափ մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ տեսան որ ծառիկը բաւական ամուր խրուել էր խճախառն հողի մէջ. երեխ ընկուզենին չէր ուզում բաժանուել իր մալրենի հոդից: Նրանք չէին սպասում, որ այդ փոքրիկ ծառը երկար ժամանակ կ'ընդդիմանալ: Սակայն ինչ որ էլ լինէր, նրանք վճռել էին արմատախիլ — տեղահանանել ընկուզենուն և տանել իրանց պարտիզում տնկել...

— Կամսար, նայիր ծառիկի ամենափոքր արմատին. նա վիրաւորուել է... Տես, կարծես, լալիս է, ասաց խղճահարուելով Մարիամը երբ տեսաւ գեղնաւուն ջուրը, որ ծորում էր արմատի վիրաւորուած տեղից:

— Ս.յս ըոպէիս կը փաթաթեմ փալասով:

Եւ կամսարը իսկոյն մի բարակ շերտ պատռեց իր արխալուղից և զգուշութիւնով փաթաթեց վիրաւոր արմատը, և ապա երկուսով ուրախ-ուրախ եկան իրանց պաշտէզը: Նրանք մի լաւ տեղ ընտրեցին ընկուզենու համար և բաւական խորը տնկեցին:

— Մարիամ, վազէր ջուր բեր ծառիկի համար:

Քոյրը վազեց ջուր բերելու:

Մի քանի ըոպէից յետոյ վերտարձաւ նա և բերած ջուրը ածեց ընկուզենու տակը: Եւ յետոյ մի քիչ խօսալով ընկուզենուց ապագայում ստոնալիք օգուտների վրայ՝ նրանք ուրախ, զուարթ և մեծ լոյ-

սերով գնացին ուրիշ տեսակ և նոր ծառեր գտնելու:
Մինչև այդ ժամանակ ընկուզենին ուշաթափուած
էր. ջրից մի փոքր սթափուելով բացեց աչիկները և ա-
պուշ-ապուշ նայեց իր շուրջը... Բոլորն օտար—ջուրը
դառնահամ, օդը դառնաշունչ, հողն անախորժ, իր չորս
կողմի բոլսերն ու տունկերը անծանօթ... Դէս նայեց,
գէն նայեց՝ ոչ մի ծանօթ պատկեր... Ամենը, ամենը
մթնացրին չուառական ընկուզենու զգայուն սիրաը. նա
վշտագին շրշիւն արձակեց և սեւամած ամպն անփա-
խուստ գարձաւ նրա փոքրիկ աչերից... Քանի մի ան-
գամ խորը հառաչեց և թուլացաւ—ուշաթափուեց, կա-
նաչ թերթերը սկսեցին ճլորել...

Մանուկները վերադարձան իրանց հետ բերելով մի
փոքրիկ սալորենի. նրան էլ տնկեցին ընկուզենու կշին:

Սյսպէս նրանք ամեն օր գտնում էին տեսակ-տե-
սակ ծառեր և բերում տնկում էին իրանց պարտիզում:

Բ.

Մի երկու օրից յետոյ Կամսարն ու Մարիամը գալիս
են ակն տալու իրանց պարտիզի ծառերին և ինչ են տես-
նում—խեղճ ընկուզենին թառամել—ուշաթափուել էր...
Խսկոյն վազում են ջուր բերում: Բայց... բայց վերջին թա-
ռամելն էր ինչ թառամել էր, էլ յետ չէր գալիս: Քոյր
ու եղբայր արտասուեցին... Նրանք բարի սիրտ ունե-
նալով, հասկացան որ շատ անգիտօրէն վարուեցին ծառի
հետ զրկելով նրան մայրենի քաղցը հողից և կրկին թառա-
մած ընկուզենուն առանձին խնամքով տեղից հանեցին
և տարան նախկին տեղում—քարափի ճեղքուածքում
տնկեցին:

Սյժմ մեծ հոգացողութիւնով սկսեցին սալորենուն
աճեցնել, որպէս զի նա էլ ընկուզենու վախճանը չու-

նենայ: Թէև սա ևս երբեմն ընկուզենու վիճակին էր
ենթարկվում, բայց յետոյ ընտելացաւ օտար երկրի հո-
ղին ու ջրին: Սակայն տարին հազիւ մի մատ բարձրա-
նում էր, այն ինչ նրա վաղեմի ընկերներն իրան մայր
կարող էին ընդունուիլ...

Վաթսուն տարուց յետոյ Կամսարը իր և քրոջ թոռ-
ների հետ անցնում էր մեզ ծանօթ քարափի մօտով:

— Նայեցէք այս ընկուզենուն. ինչպէս անվեհեր կեր-
պով այս քարափի կրծքին աճել է, ասաց զմալած Կամսարը:

— Սիրելի զաւակներ, սա իմ ծանօթ ընկուզենին է,
տւելացրեց ծերունին և պատմեց նրա գլխի անցքը:
«Սրա ընկեր սալորենին», շարունակեց նա, «Թէև դալար
մնաց, բայց նման էր թուլակազմ մարդին, որ ամեն օր
հիւանդանում է: Նա ահագին ծառ էր դարձել, բայց
շատ քիչ էր պտղաբերում: Իւրաքանչիւր տարի հինգ-
վեց ճիւղ չորանում էր նրանից, այդ պատճառով ես
ստիպուած էի կտրատել նրանց: Վերջապէս երեսուն ու
երկու տարուց յետոյ ըոլորովին չորացաւ»:

— Այն խեղճի վտիտ և փտած բունը հենց այժմ
էլ գտնվում է մեր պարտիզում, վրաբերեց սլառաւ Մա-
րիամը. որքան զանազանութիւն...

Եթէ գար ու կէս ապրէին Կամսարն ու. Մարիամը
կը տեսնէին թէ որքան զօրացաւ կրկին իր մալքենի
հողում տնկուած ընկուզենին, որ կարողացաւ ուժգնու-
թիւնով ճեղքել ամուր քարաժայուը և ներս անցկաց-
նել իր զօրեղ արմատները նրա մէջ... Դրանից դուրս
ցայտեց ժայռից մի յորդառատ, վճիտ և սառնորակ աղ-
բիւր, որ ուռոգում էր մի նսեմաստուեր անտառ: Խսկ
հաստաբուն ընկուզենին, որ արծուի նման նստել էր
քարափի գագաթին՝ իր մեծ-մեծ ընկուզերի քաղցը հա-
մով զարմացնում էր աշխարհքին...

ԵՂՆԻԿ



Նիորձ եղնիկը առուակի միջին
Տեսնելով իրայ գեղեցիկ պատկեր,
Ինքն իրան փքուեց, խիստ հպարտացաւ,
Որ ունի այնպէս շքեղ եղջիւրներ:
«Ո՞վ սիրտ կանի, հպարտօրէն ասաց,
«Թեղեցկութեամբ ինձի հետ մրցել,
«Երբ ես ունիմ այսպէս եղջիւրներ,
«Որոնք պարծանք են արքալավայել»...

Բայց երբ նա նորից առուակին նայեց,
Տեսաւ ոտները նիհար ու բարակ.
«Փուհ, անճոռնի տեսք», բացադանչեց նա,
«Կատարեալ չոփեր են տձեւ, ալլանդակ»...

Հենց ալդ միջոցին արի որսկանը
Իր բարակներով նրան հետեւեց,
Հպարտ եղնիկը սրբնթաց ոտքով
Մեծ տարածութիւն աներկիւղ կտրեց.
Մտաւ անտառը, բայց նրա եղջիւրներ
Բռնուելով ծառի այս և այն ճիւղին՝
Եղթայեցին նրան անտառի միջին...

Հասաւ որսորդը հրացանը պարպեց,
Եղնիկը ցաւով գլուխը ծռեց.
Միայն ալդ միջոցին — գնդակը սըտում —
Զգաց խղճալին իրայ գեղեցիկ
Եղջիւրների ունայն պերճութիւն՝
Եւ գէշ ոտների անդին քաջութիւն...



ԳԱՅԼԵՐ

ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

Ա.



ոքըիկ Սրամը իր կեանքումը գալ չէր տեսել։ Մի
օր, երբ իր հօր հետ կանգնած կտրի վրայ նա-
յում էր փողոցին, նրանց առաջով անցան մի խումբ
գիւղացիներ, որոնք քարշ տալով տանում էին մի գայ-
լի, որին որոգալթով էին բռնել։

— Հայրիկ, ինչու են այն շանը այնպէս քարշ տա-
լիս, մեղք չի։

— Նա շուն չի, որդի։

— Հապա ինչ է, հետաքրքրուած հարցրեց Սրամը։

— Նա գալ է, գալ, պատառող գալ…

— Բոլորովին շան նման է, միայն ագին մի փոքր
երկար է և քարշ ընկած։ Բայց եթէ շան վրայ էլ այդ-
քան մարդիկ հաւաքուեն ու յարձակուեն, նա էլ ագին
քարշ կը ձգի։ Զէ, չէ, սուտ ես տառմ, հայր, ես չեմ
հաւատում… նա գալ չի։

— Այո՛, ճիշտ է. գայլը շան նման է, ասաց հայ-
րը. նրանց մարմնի մէջ համարեա զանազանութիւն
չը կայ… Միայն գայլերը անտառներում ու սարերում
են ընակում—«վայրենի» են, այն ինչ շները մարդաբնակ
տեղերում են կենում և «ընտանի» են…

— Եթէ այդպէս է, ինչու չենք գայլերին էլ ըն-
տանեցնում, մեզ մօտ պահում, որ տունը պահպանեն
գողերից և աւազակներից։

— Ա՛յ ասեմ. պատճառն այն է, որ այդ գայլերը՝ «վայ-
րենի շները» անիծուած են մեր նախահայրերից, նրանք

նղովուած են իրանց շատ առաջ կատարած չար գործի
համար:

— Ի՞նչ գործի համար, ես չը գիտեմ:

— Այս ըոպէիս կը պատմեմ, լաւ ականջ դիր:

Բ.

«Մեզանից շատ առաջ, սկսեց հայրը, հին ժամանակներում բոլոր մարդիկ երջանիկ էին: Նրանք ինչպէս անարատ մանուկներ՝ բոլորովին մերկ վազվզում էին կանաչագեղ դաշտերում և գլորուելով հոտավառ ծաղիկների մէջ՝ քաղցր ձայնով երգում էին երկնային հրեշտակների նման... Անհոգ ու ուրախ սրտով վայելում էին լիապէս կեանքի սքանչելիքն ու բարիքը... Առանց վախի, առանց կտսկածի մտնում էին խոր-խոր անտառները, հասուն պտուղներով լի պարտէզները և ամեն մինը իր սրտի ուզած անուշահամ և համեղ ստուղն էր վայելում... Նրանք քաղցրաբար համեցէք էին անում, կամ մէկմէկու բերանն էին դնում հիւթալի պտուղները... Երեկոները խմբերով սառնորակ ջրերի մէջ լողանում ու զօվանում... Հազարաւոր տեղերից, բիւրաւոր ծմակներից վճիտ աղբիւրներ ու առուներ էին ճանապարհ ընկել, կլկում ու խոխոջում... Վառ արեց էր հրաշագեղ ճաճանչներն էր սփոռում բիւր սքանչելիքով լի դաշտերի և անտառների վրայ: Առաւօտները նստում էր արծաթափայլ ցողը, որին յաջորդում էր զովագին և աղու զեփիւռը օրօրելով անհուն բարիքով բեռնաւորուած տունկերն ու ծառերը... Սակայն երփներանգ թուչունները, խայտաբղէտ միջատները իրանց զըաւիչ երգերով և տզզոցներով թնդեցնում էին մաքուր ու կենդանանար օդը... Իսկ ամեհի գաղաններն ու կենդանիները սիրով վայփայում, պաշում ու համբուրում

էին մէկ մէկու... Նրանք դունչ դնչի, բերան բերնի դրած՝ լիզում լազարում էին փոխադարձաբար... Ահեղ առիւծը կովի քնքոյշ հորթին սեղմած իր կրծքին, ծիծ էր տալիս որպէս իր հարազատ զաւակին. արջը գառանը գրկախառնած՝ իրան թաթերով նրա փափուկ մազերն էր շոյում, իսկ կատուն հացի փշրանք բերնին՝ կերակուր էր տանում քնքոյշ մկնիկին...

Մի խօսքով սէրն ու խաղաղութիւնը իրանց ազատու լայն թևերով շրջապատել էին բոլորին... Ամեն կողմից միութիւն ու փայփայանք, ամեն ծալրից ընկերութիւն ու գգուանք...

Հըճվում էին մարդիկ ու խնդում,
Զուարթ գէմքերով գէս ու գէն վազում,
Ոչ մի կենդանի և ոչ արարած
Ամենեին վախ, ահ չէին զգում...
Բարձր, վիթխարի ծառի կատարին
Սոխուկն իր քաղցը երգն էր դալլալլում,
Փչում էր զով ու կենսատու քամին
Ծաղկանց թերթիկը թեթև օրօրում...
Անտառը հով էր, շքեղ, զովագին,
Բանգերանգ ծաղկունք անոյշ հոտ բուրում,
Վազում էր դաշտում կարկաչիւն առուն՝
Թուլացած տունկերին կեանք ներշնչում...

Գ.

Մինչդեռ ամենն էլ այդպէս հաճելի դրութեան մէջ լողում էին միամտաբար, մինչդեռ գեղեցիկ բնութիւնը սքանչելիքի մէջ ծփում էր, մինչդեռ խաղաղութեամբ ծաւալվում էր օրուայ շրջանը, երկու շուն — մինը արու, միւսը էգ — չար խորհուրդ յղացած իրանց

մտքերում, սուս ու փուս հեռացան, բաժանուեցին այն անմեղներից:

Մի քանի ըոպէից յետոյ նրանք կատաղած յարձակուեցին մի անմեղ գառան վրայ, պատառեցին և ագահաբար լափեցին... Նրանք չ'սպասեցին մեր նոխահօրը, որ իր ժամանակին պէտք է գար ու բաժին տար, կերակրէր նրանց: Այդ անհամբերները անողորմաբար պատառելով գառանը ներկեցին կանաչ դաշտը արիւնով. այն դաշտը, որի վրայ մի կաթիլ, անդամ մի շիթ արիւն չէր թափուել, այն տարածութիւնը, որի վրայ մի անմեղ ոգի չէր հառաչել...

Նախահայրը երբ եկաւ տեսաւ գոռան արիւնը՝ մնաց շուարած, աչքերը լցուեցին արտասուքով, սիրտը մղկտաց. նա առաջին անգամն էր հանդիսատես լինում այնպիսի անխիղճ արարքի...

Միւս օրը խոկեց, դուրս արեց իր մօտից—երջանիկաշխարհից այդ շներին: Նրանց անուանեց «գալլեր», որ կը նշանակէ «ագահներ»... Նա նզովեց և անիծեց նրանց. պատուիրեց իր շներին, որ միշտ թշնամի մնան նրանց հետ, միշտ հալածեն այդ տպերախտ ագահներին...

Այդ ժամանակից սկսած, սիրելի որդեակ, անկըշտումները օր-օրի վրայ շատանալով ստեղծեցին մի մեծ խումբ անհոգների, որոնք գիշատելով են պարապում մինչև ալժմ և խումբ ու յափշտակում են ուրիշներից բարեխղճութեամբ հալիթհալիթած վաստակը...

Եւ ալդպիսիներն իրանց ալդ ատելի բնաւորութիւնով շարժում են ամենի զզուանքը...

1883

ԱՂԲԻՒՐ



առն կերպով իրար մօտ ձգուած էին սարեր: Այս սարերը բոլորովին մերկ էին և ոչ մի ծառ չէր բուսած նրանց վրայ: Նրանց մէջ կար մի սար, որը խիստ երկար էր և ներքեւի մասը ծածկուած քարափով: Այդ քարափից ջուր էր ծլծլում, որից նրա առաջ մի փոքր լճակ էր կազմուել. նա խիստ ստուն էր և իւրաքանչիւր անցուորական նրանից կուշտ ջուր էր խմում: Մի անցորդ, որ շատ անգամ էր անցել այդ կողմով, երկար զմայլուած նալելուց՝ վճռեց այդ աղբեկը մաքրել, լուսալով որ շատ ստուն ջուր կը բղիսէ քարափից: Նա սկսեց իր ձեռքերով աղբեկը աւելորդ առարկաներից մաքրել և կանոնաւոր ընթացք տալ: Քանի նա ձեռքերով փորփորում էր, զանազան կողմերից ջրեր էին ցալում: Նրա ուրախութեանը՝ չափ չկար: Անցուորականը իրօք համոզուելով որ փառաւոր աղբեկը կը բղիսէ այդ տեղից, միւս անգամին բերեց իր հետ գործիքներ և սկսեց քարափը ճեղքել: Ուրիշ անցուորականներ տեսնելով նրան՝ ծիծաղեցին նրա վրայ:

—Եղբայր, ի զուր ես տանջվում. ալդտեղից աղբեկը չի գոյանալ:

—Այդ շուտով կը տեսնէք, պատասխանեց քրտնացն աշխատաւորը և սկսեց չարչարուել: Նա չէր սխալ գում: Զուրը հետզհետէ յորդանում էր, և առուակ կազմուելով սկսեց կարկաջել, առաջ վազել: Միւս անգամին տեսան անցուորականները և ասացին. «Բարեկամ, կարծիքիդ մէջ չէր սխալվում»... Նրանք էլ նրա հետ միացան և սկսեցին աշխատել: Միացած ոլժը հրաշք-

Ներ գործեց: Քարափը բաւականին ճեղքեցին և աղբիւրի ակը բացուեցաւ: Զուրը յորդութեամբ սկսեց ցայտել: Անցուորականները ջրի առատութեան վրայ զարմացել էին: Այդքանը բաւական համարելով՝ աղբիւրի շուրջը քարեր շարեցին և գեղեցիկ տեսք տուին: Զուրը խիստ համեղ էր. ճանապարհորդները օրհնելով նրա սկզբնապատճառ եղողին՝ զովացնում էին իրանց սիրտը նրա սառնորակ ջրից: Քանի դնաց, աղբիւրը զուարժացաւ և իր հսկարտ քչքչոցը տարածեց հեռու: Այնուհետև սկսեցին մօտակալ անտառից կենդանիներ, թռչուններ գեպի աղբիւրը վազել սառն ջուր իմելու: Սրանք իրանց հետ բերին զանազան սերմերի, ծառերի պատղների հատիկներ, որոնք ընկնելով աղբիւրի ափերքին, սկսեցին աճել, բազմանալ...

Անցաւ մի քսան տարի. աղբիւրի շուրջը պատճառած էր մի փոքրիկ անտառով, իսկ աղբիւրը միշտ նրա ստուերի տակ մնալով՝ սկսել էր աւելի զուարժանալ և վարաբել: Քիչ-քիչ անտառը մեծացաւ և խտացաւ. միշտ այդպիս կոյտ մնալով, զանազան կենդանիներ, թռչուններ սկսեցին բունաւորուիլ այդտեղ: Սարը համարեա ծածկուեցաւ անտառով. այնուհետև անձրւները սովորական էին և դրանց ջրերը թագնուելով խոնաւ հողում՝ աւելի նիւթ էին տալիս աղբիւրին և վարացնում նրան:

Սակաւ առ սակաւ սկսեցին սարի այս և այն փեշերքից վազել նոր նոր աղբիւրակներ, որոնք մեծանալով, առուակներ կազմելով, անոյշ խոխոջ հանելով գնում խառնվույ էին մեծ աղբիւրի ջրերի հետ: Այդպիսով աղբիւրի ջուրը մեծացաւ և մի գետակ կազմուեց, որ կարող էր երկու ջրազաց պատացնել: Գետակը սկսեց հոսել դաշտերի միջով, — այդտեղ ևս մի քանի տա-

րուալ ընթացքում դուրս եկան ծառեր և անտառ կազմուեց...

Գետակը տարէ-ցտարի մեծացաւ և վարաբեց: Անտառն էլ քանի գնաց, այնքան խտացաւ և լցուեցաւ զանազան կենդանիներով և թռչուններով: Մարդ կը հիանար, եթէ անցնէր անտառի միջով. աղբիւրի վստահ կարկաջը, երգեցիկ թռչունների դալլալիկը, պէս պէս կենդանիների աղաղակը զմալլելի էին:

Վերջապէս մարդը նկատեց այդ անմահական աղբիւրն ու անտառը. նկատեց և իր կին ու զաւակները հաւաքելով, այգեստան կազմեց, տուն շինեց, արտի տեղ ընտրեց: Զուրը առատ, հողն առատ, մարդիկ հաւաքուեցին և իրանց համար շինութեան տեղեր ընտրեցին: Աղբիւրի և անտառի վայելքները մարդկանց ուշքն ու միտքը խլեցին: Մէկմէկու ետևից տներ աւելացան գետակի ափին. մարդիկ հիացած էլ չէին ուզում ոտ դուրս գնել այդ տեղից: Անցան մի քանի տասնեակ տարիներ և ահա մի փոքրիկ գիւղ երևաց գետակի ափին:

Բայց տեսնենք մարդիկ ինչպէս են վայելում աղբիւրի ջրերի արդիւնքը: Տեսնենք խնայողութեամբ կը վարուին, թէ շարունակ դառերը կտրատելով կսկսեն անտառը չորացնել, որին և կը հետևի աղբիւրի ցամաքումը: Մարդիկ ագահ են և բնութեան վայելքները խնայողութեամբ չեն գործ ածում իրանց օգտին: Նրանք սեփական օգտի համար երկիրներ են փչացնում և ինչ զարմանալի բան կը լինի, եթէ այդ նոր անտառը փչացնեն, որ և կոկսի աղբիւրի ջուրը նուազիլ, — այնուհետև մէկմէկու ետևից կը չորանան ծառերը, և այդ բերքի անտառը կրկին կը վերափոխուի նախկին չոր և լերկ սարի...

ՓՈԲՐԻԿ ՄՐՆԳԱՅՐԸ

Ա.



Ը գիտեմ որ թուին տաղբում էր մի փոքրիկ հովիւ։
Հինգ տարեկան հասակից դառներ էր արածաց-
նում։ Նա շատ էր սիրում իր փոքրաթիւ հօտին և միշտ
սիզաւէտ լեռներն էր քշում արածացնելու։

Այդ փոքրիկ հովուի անունը Կամսար էր, բայց
կրծատելով Կամսօ էին ասում։

Նկատուած է, որ լեռնաբնակները բանաստեղծա-
կան ոգի ունին, և այդ վսեմ ոգին կար մեր Կամսարի
մէջ։ Ծաղկապսակ լեռները, առուների մեղմ կարկաչը,
շքեղատես մարգագետինները զարթեցրել էին նրա մէջ
սէր դէպի բնութիւն, սէր դէպի գեղեցիկն ու վսեմը։
Եւ այդ սրբազն սէրը նա արտայատում էր սրտառուչ
երգերով, որոնց իր շինած սրնգի վրայ բեկբեկուն ու
անոյշ եղանակով նուագում էր։

Շատ անգամ քլքլան ազբիւրի ափին թինկն տուած՝
մտախոհ կերպով աչքը չոռում էր նրա սպատիկ, ծուփ-
ծուփ ալիքներին և քաղցր երազներով ոգեսորվում։ Աղ-
բիւրի խորհրդառոր և ներդաշնակ մըմունջը յուզում էր
նրա միտքը... Նրա ախորժելի տիսրութիւնով պատաժ
դէմքը թեթև ժպտում էր այդ միջոցին և ապա վերց-
նելով իր սրինգը՝ հնչում էր նրան և հետն էլ քաղ-
ցըր ձախով երգում։ Անտառի թեւաւոր երգիչները նա-
խանձվում էին Կամսարի վրայ և իրանց երգերով մըր-
ցում էին նրա հետ։ բայց սրանք էլ շուտով զգացին
իրանց ստորութիւնը և սրնգահարի երգելու ժամանակ
լուսում էին և նրանից դաս առնում։


383

Նա դառներին կանաչ լեռներն էր քշում և սրին-
գը հնչելով քաղցրաձայն երգում։

«Արածեցէք կանաչ խոտը,
իմ նախշունիկ գառնուկներ,
Շատ քաղցր է, շատ համեղ է,
Զէք կշտանալ, հոգեակներ։
Կանաչազարդ գաշտեր, ձորեր
Ձեզ համար են պճնուել,
Մատաղ տունկը ձեզ համար է
Գլխիկը հողից գուրս հանել։
Տեսէք ինչպէս սիրուն ցողը
Զինջ իջել է լեռներին,
Նա փալլում, պապղում է
Իբրև հատիկ գոհարին։
Բնութիւնը ձեզ համար է
Այդպէս ցուրտ ջուր պատրաստել,
Կանաչ խոտը նրանով է
Քաղցրացրել, համեմել։

Արածեցէք, իմ «ամլիկներ»,
Մի լիշէք ձեր մալբերին,
Նրանք կաթ են պատրաստում
Հեռու՝ սարի միւս կողմին։
Կը գալ ժամը ուրախ-ուրախ
Ձեր մալբերի մօտ կը վազէք,
Եւ նրանց լիք պտուկներից
Հալալ կաթը կը ծծէք։
Զար գալլերից երկիւղ չը կայ,
Նրանց հեռու կը փախցնեմ,
Քաջ գամփուխ ես «քիս» կը տամ։
Պատառողին կը վախեցնեմ։

Արածեցէք, լաց մի լինէք,
Իմ նախշունիկ գառնուկներ,
Ուրիշ աշխարհ այսպէս խոտ չէ,
Շատ կան խանձուած, չոր լեռներ:



Այն աշխարհի գառնուկները
Երբեմն սոված են մնում,
Խոկ մայրերին, խեղճ մալերին
Շատ անդժաբար են կմում:
Կրծկրծում են չոր գետինը
Աղի մայում ու վայում,

Սիրտն ու բերանը խաշելով՝
Կմախք, ոսկոր են գառնում:
Դուք բախտաւոր էք, երջանիկ,
Արածեցէք, ամլիկներ.
Նրանց մասին շատ եմ երգել,
Շատ կը երգեմ, սիրուններ:
Քաղցր է հողը, մեղք է խոտը,
Արածեցէք, կշտոցէք,
Ծաղկապսակ մեր սար ու դաշտ
Ուրիշ տեղեր գտնել չէք։
Գառները կարծես երգի միտքը հասկանում էին և ա-
րածելով սրնդի քաղցրալուր ձայնին ականջ էին դնում։

¶.

Մի օր մեր փոքրիկ սրնդահարը վճռում է թողնել
լեռները և դիմել քաղաք, երևի իր շնորհքը ցոյց տա-
լու քաղաքացիներին։

Նա լուռ ու մունջ վերցնում է իր միակ հարլս-
տութիւնը — սրինդը և ընկնում է ճանասլարհ ուշա-
դրութիւն չը դարձնելով մօր աղաշանքներին։

Կամսարը քաղաք հասնելով՝ սկսում է նուսպել
աների առաջ, հրապարակներում, բայց նրան շատ քիչ
զնահատողներ եղան։ Գլխաւորապէս փոքրիկ մանուկ-
ներն էին նրա ունկնդիրները, որոնք անմեղ ժպիտով
ծափահարում էին փոքրիկ սրնդահարին, երեմն էլ մի
քանի բարեսիրտ մարդիկ կոպէկներ էին ձգում նրա ա-
ռաջ իբրև վարձ նրա վարպետութեամբ ածելուն։ Կամ-
սարը հազիւ կարողանում էր ասլրել. շատ անդամ նա
քաղցած էր մնում, այնքան սակաւ էր նրա եկամուտը...
բայց նա համբերութեամբ դիմանում էր ալդ աննա-
խանձելի դրութեան։ Սակայն մի ներքին զգացմունք

կրծում էր նրա սիրտը թողնել քաղաքը իր ապերախտ մարդիկներով։ Նա լիշում էր իր լեռները, սիրուն գառները, անտառն ու կարկաջուն աղբիւրը։ Նա գիշերները երազներով սլանում էր իր ծննդավայրը և արթնանալով աղի-աղի արտասվում էր... Քանի քանի անգամ նա ճնշեց այդ զգացմանը, բայց նա լոպէ առ լոպէ յայտնվում էր առաւել բուռն կերպով։

Կամսարը երկոր չը դիմացաւ. մտաբերեց իր նախկին երջանկութիւնը և շատ լացեց... Նա զգաց իր սրիալը և աճապարելով գիւղը դիմեց այս խօսքերը առելով. «Ո՛հ, էլի գնամ սիրելի գառնուկներիս մօտ, գնամ լեռները, թեաւոր երգիչները, աղբիւրը սիրեմ, գնամ կանաչախիտ տեղերում իմ երգերը հիւսեմ... Գնամ աղաչեմ մօրա նրա խօսքը չը լսելու համար»...

Շուտով Կամսարը գիւղը հասաւ և մօր գիրկն ընկնելով, բացագունչեց.

— Մալրիկ-ջան, ներիք ինձ, ես մեղաւոր եմ...

Սլո խօսքերին հետևեց մի խուլ հեկեկոց. Կամսարը չը կարողացաւ շարունակել. Նրա սիրտը լքցուեց և խեղդեց նրա ձախնը... Մօր սիրտը, կարծես, փուլ եկաւ այս անակնունելի վոփոխութիւնից, բայց տեսնելով որդուն ողջ և առողջ՝ հանգստացաւ։

— Հենց այդպէս էլ կարծում էի, ներում եմ, որովհետև սխալուել ես, ասաց նա վերջապէս։

— Բայց գիտե՞ս, Կամսօ-ջան, — շարունակեց մայրը քնքշութեամբ, — որքան են տիրել գառներդ, նազելի երգիչներդ... Երբ մտնում էի անտառը, կարծես, ըուլորն էլ սգում էին քեզ համար, ոչ մէկը նախկին զուարթութիւնը չունէր, բոլորն էլ լոել էին...

Կամսարը չը կարողացաւ համբերել. իսկոյն դուրս թռաւ մօր գրկից և ալցելեց իր սիրելի վայրերին և ե-

րախտագէտ բարեկամներին։ Բոլորն ոգի ստացան նրա գալուստն իմանալով, բոլորն էլ իրանց ծանօթ նուագածութիւնից թօթափեցին տիրութիւնը և զուարթացն։ Լուռ անտառը թնդաց և բնութիւնը նախկին զուարթութիւնը ստացաւ...

Նա կրկին առաջուայ սիրուն սրնգահարն դարձաւ։ Եւ մեր երգիչ-բանաստեղծ կամսարը աւելի կատարելագործուելով առաւել երջանիկ էր, քան բազմաթիւ արուեստագէտներ իրանց փառքի լուսաճաճանչ ճառագալթների մէջ...

1885

ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ — ՍԲԻՆԳ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Երես

Հըատաբակչի կողմէց	3	«	»
Սիրելի ընթերցող	5	«	»
I. Արշակունյաց (Երգ)	7	«	»
II. Հեղինէ և նախագիծ	8	«	»
III. Աշեր (բանաստեղծութիւն)	19	«	»
IV. Եղեգնից աղջիկ (Հին զբոյց) .	21	«	»
V. Բարեսիրտ մանուկ	30	«	»
VI. Ընկուզենի	34	«	»
VII. Եղնիկ (առակ)	38	«	»
VIII. Գալեր (աւանդութիւն)	41	«	»
IX. Վարդենի (ստանաւոր)	45	«	»
X. Աղբեր	47	«	»
XI. Փոքրիկ սրնգահարը (Փոխա- դրած)	50	«	»

Հ. Թարգիրոսյան

Գարիկ

պ. Թեղեփ մ. 43

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL028219

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL028218

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL028217

ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL028216

